

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան	3
1. Կարգավորվող ոլորտների իրավիճակի և հիմնախնդիրների մասին.	4
2. Կարգավորման օրենսդրական բարեփոխումներ.	4
3. Հեռահաղորդակցություն (այդ թվում՝ հեռուստատեսություն և ռադիո).	6
4. Տնտեսական մրցակցության պաշտպանություն	8
5. Լիցենզավորում, ներդրումային ծրագրերի որակական ցուցանիշների ուսումնասիրություն և սակագնային քաղաքականություն	12
6. Հասարակության հետ տարվող աշխատանքների բարելավում	15
7. Ներպետական և միջազգային համագործակցություն	16

Նախաբան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2013 թվականի տարեկան գործունեության ծրագրի կազմվել է հիմք ընդունելով կարգավորվող ոլորտների կարգավորման քաղաքականության և տնտեսական մրցակցության բնագավառներում նախատեսվող զարգացմանը նպաստող գերական ուղղությունները ու դրանց իրականացմանն ուղղված միջոցառումների հայեցակարգը: Ծրագրի գերակա ուղղություններն են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում տեղական արտադրության դինամիկ զարգացմանը նպաստելը, սակագնային ու տնտեսական մրցակցության բնագավառներում արդարացի, մարդկային արժեքների վրա հիմնված ու հիմնավորված քաղաքականության վարումը, կառույցի նկատմամբ հանրության ու սպառողների վստահության ամրապնդումը, ինչպես նաև մրցակցային միջավայրի էլ ավելի ազատականացումը, ինչն էլ իր հերթին կնպաստի ձեռնարկատիրության զարգացմանը, ներդրումների խթանմանն ու ավելացմանը:

Ծրագրում նշված ուղղությունները շարունակությունն են այն համակարգային քաղաքականության, որը Հանձնաժողովը իրականացրել է 2010, 2011 և 2012 թվականներին և հաշվի են առվել համաշխարհային տնտեսության իրավիճակից բխող առանձնահատկությունները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության կարգավորման քաղաքականությունը ծրագրավորվել է հաշվի առնելով երկրի տնտեսության դինամիկ զարգացման հիմնական ուղղությունները:

Հանձնաժողովը հիմնվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության, կարգավորվող բնագավառի իրավիճակի վերլուծության և նախորդ տարիների ընթացքում ձեռք բերած փորձին, իրականացնում է համալիր միջոցառումներ, որոնք ուղղված են երկրի տնտեսության զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանն և մրցակցային բարենպաստ միջավայրի ձևավորմանը:

Ծրագրի ուղղություններում ներառվել են նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովների հետ իրականացված քննարկումների արդյունքում նրանց կողմից ներկայացված առաջարկներն ու համագործակցության համաձայնագրերով ամրագրված ուղղությունները:

2013 թվականին ևս կշարունակվի հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության դաշտը կարգավորող օրենսդրական փոփոխությունների, և այդ

փոփոխություններից բխող ենթատեղեկական ակտերի մշակման ու դրանց գործնական կիրառման իրականացման գործընթացը:

Կարգավորվող ոլորտների իրավիճակի և հիմնախնդիրների մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը, իրականացնելով էներգետիկայի, հեռահաղորդակցության, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների սահմանման և վերանայման մասով) բնագավառների ու ջրային համակարգի կարգավորումը, նպատակ ունի իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը, կարգավորվող դաշտի թափանցիկության ապահովմանն և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Չանդրադառնալով կարգավորման հիմնական սկզբունքներին և կարգավորվող բնագավառների իրավիճակին (տեղեկանքը կցվում է) Հանձնաժողովը ծրագրել է իրականացնել հետևյալ միջոցառումները:

Կարգավորման օրենսդրական բարեփոխումներ

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է կարգավորման օրենսդրական շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

Օրենսդրության կատարելագործմամբ կապահովվեն հետևյալ խնդիրների լուծումը՝

-Օրենքներում առկա անհստակությունների, տարընթերցումների, տարաբնույթ մեկնաբանությունների վերացումը,

-կարգապահության ամրապնդումը և պատասխանատվության բարձրացումը:

Մինչև 2012 թվականի վերջը Հանձնաժողովը Ազգային ժողով կներկայացնի «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Գնումների մասին» և ոլորտը կարգավորող այլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ:

2012 թվականին Հանձնաժողովը նախաձեռնել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում կատարել լրացումներ՝ Հանձնաժողովի կողմից հսկիչ գնում կատարելու մասով, որի հիման վրա 2013 թվականին կմշակվեն հետևյալ նորմատիվ իրավական ակտերը՝

- Հսկիչ գնումների արդյունքում ձեռքբերված ապրանքների տնօրինման կարգը հաստատելու մասին.
- Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը հաստատելու մասին:

2013 թվականին շարունակվելու են էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգերի կարգավորման իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Սպառողների սպասարկման որակի բարելավման և մատակարար-սպառող հարաբերություններում առաջացող տարաձայնությունների կարգավորման նպատակով 2013 թվականին մի շարք փոփոխություններ են կատարվելու էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում: Առաջին հերթին լուծում է տրվելու մատակարար-սպառող հարաբերություններում ծագած վեճերին:

Մասնավորապես, մատակարար-սպառող հարաբերություններում հաշվառքի սարքերի խափանման դեպքերում ծախսված էլեկտրական էներգիայի կամ բնական գազի քանակի վերահաշվարկի ընթացքում ծագող տարաձայնությունների կարգավորման նպատակով ամբողջությամբ վերանայվելու են էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում այդ հարաբերությունները կարգավորող դրույթները, խստացվելու է մատակարարի պատասխանատվությունը, սահմանվելու են վերահաշվարկի հատուկ մեխանիզմներ և երկկողմանի պատժամիջոցներ՝ առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքին միջամտելու համար:

Ելնելով վերոնշյալից միաժամանակ լրամշակվելու են էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման՝ մատակարար-սպառող պայմանագրերի օրինակելի ձևերը:

Հեռահաղորդակցություն (այդ թվում՝ հեռուստատեսություն և ռադիո)

Հեռահաղորդակցության (այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի) բնագավառը, որի կարգավորումը իրականացվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով՝ իր բազմաբնույթ ուղղություններով և խնդիրներով համարվում է Հանձնաժողովի գործունեության գերակա ուղղություններից:

Կշարունակվեն սկսված բարեփոխումներն այս բնագավառում, մշտական ուշադրության կենտրոնում պահելով բնակչությանը մտահոգող խնդիրները, և համապատասխան աշխատանքներ կտարվեն կարգավորվողների հետ լուծելու այդ խնդիրները:

2013 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ միջոցառումներն ու աշխատանքները.

- հանրությանը հնարավորինս մատչելի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում,
- ֆինսված և բջջային կապի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը ընդլայնելու, բջջային կապի բաժանորդների համար նոր սակագնային պլանների մշակման և սակագների նվազումը ապահովելու կապակցությամբ միջոցառումների ձեռնարկում,
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ոլորտում մրցակցության զարգացում,
- լիցենզիաների և թույլտվությունների պայմանների, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից հաստատված իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին հետևելու նպատակով՝ պարբերաբար ուսումնասիրությունների իրականացում էլեկտրոնային հաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի լիցենզավորված ընկերություններում,

- կարգավորվող ընկերությունների կողմից օրենսդրության կամ լիցենզիաների և թույլտվությունների պայմանների խախտման փաստերի արձանագրման դեպքերում՝ վարչական վարույթի գործընթացի կազմակերպում,
- Հանձնաժողովին հատկացված ռադիոհաձախականությունների առևտրային (կոմերցիոն) տիրույթի օգտագործման պլանավորում, համակարգում և արդյունավետ օգտագործում,
- էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի իրավասու մարմնի ենթակայությամբ գործող կազմակերպության կողմից՝ օրենսդրության պահանջներին համաձայն Կարգավորողին պարբերաբար հաղորդվող տեղեկությունների հիման վրա՝ համապատասխան քայլերի ձեռնարկում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ռադիոհաձախականություններ օգտագործող բոլոր անձանց հայտնաբերելու և օրինական դաշտ ներգրավելու կապակցությամբ աշխատանքների իրականացում,
- էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի, փոստային կապի, պարտադիր տեխնիկական զննության բնագավառների կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծության իրականացում, ինչպես նաև համապատասխան հայտերի ներկայացման դեպքերում՝ սակագների սահմանում և վերանայում,
- հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզավորման մրցույթների հայտարարում և կազմակերպում,
- սիրողական ռադիոօպերատորների թույլտվությունների դասակարգման և տրամադրման, սիրողական ռադիոկայանների գրանցման, տեղադրման, և օգտագործման կանոնների ու որակավորման չափանիշներին սիրողական ռադիոօպերատորների համապատասխանությունն ստուգելու կարգի հիման վրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սիրողական ռադիոյին վերաբերող իրավական դաշտի կանոնակարգում և սիրողական ռադիոօպերատորների լիցենզավորում,

- կշարունակվեն նաև հեռահաղորդակցության բնագավառում պարբերաբար ծագող խնդիրների լուծման նպատակով՝ գործող իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները,

- ուշադրության կենտրոնում կպահվի հեռահաղորդակցության ծառայություններից օգտվող բաժանորդների իրավունքների պաշտպանության հարցը,

- ուշադրություն կդարձվի տեղական ինտերնետային կայքերի հոսթինգ ծառայությունների կազմակերպմանը, ինչը թույլ կտա զարգացնել տեղական տեղեկատվական ռեսուրսները և զարգացնել առկա մասնագիտական կարողությունները,

- 2013 թվականի ընթացքում Հանձնաժողովի գործունեությունն կուղղվի նաև բջջային կապի 3-րդ սերնդի ցանցերի՝ 3G ստանդարտի ներդրմանը և ցանցի շահագործմանն առնչվող խնդիրների ուսումնասիրությանը՝ ինչը հնարավորություն կընձեռի բջջային ցանցի բաժանորդներին շատ բարձր արագագործություն ունեցող համակարգի միջոցով ստանալ ծառայությունների ավելի մեծ տեսականի՝ տեղեկատվական հոսքերի հսկայական ծավալներով: Ապահովելով ինտերնետից օգտվելու լիարժեք հնարավորություն մեծ արագագործությամբ, 3G ստանդարտը հնարավորություն կտա բաժանորդներին օգտվել նաև կորպորատիվ ցանցի հեռակա օգտագործման հնարավորությունից՝ բջջային հեռախոսակապի միջոցով, այն է՝ անցկացնել կամ մասնակցել տեսակոնֆերանսի, հետագայում հնարավոր է նաև՝ օգտվել ապրանքների կամ ծառայությունների համար վճարման էլեկտրոնային տարբերակից:

Ընդհանրապես 2013 թվականի ընթացքում ակնկալվում են հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում՝ ռադիոհաղորդումների հեռարձակման, իսկ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում՝ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման լիցենզիաների հայտեր:

Տնտեսական մրցակցության պաշտպանություն

Այս ոլորտի ծրագիրն իրենից ներկայացնում է Հանձնաժողովի կողմից իրականացվող հաջորդական միջոցառումների համակարգ, որոնք ուղղված են մրցակցության պայմանների ապահովմանը, բնակչության սոցիալական վիճակի

բարելավմանն և օպերատիվ ձևով անդրադառնում են երկրում տնտեսական իրավիճակի փոփոխություններին:

Այդ միջոցառումները Հանձնաժողովը 2013 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականության հետևյալ գերակա ուղղություններով.

Ապրանքային շուկաների ուսումնասիրություններ, որոնց միջոցով կպարզվեն.

- *ապրանքային շուկաների ծավալները, ապրանքային և աշխարհագրական սահմանները,*

- *շուկաների կենտրոնացվածության աստիճանը, շուկա մուտք գործելու խոչընդոտները,*

- *պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության ազդեցությունն այդ շուկաների վրա:*

Ուսումնասիրության ընթացքում հատուկ ուշադրություն կդարձվի տնտեսավարող սուբյեկտների միջև **հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերմանը**. Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերմանը, կանխարգելմանը, սահմանափակմանն ու արգելմանն ուղղված հիմնական միջոցառումներն են.

- *ապրանքային շուկաներում գործող գների ուսումնասիրությունը,*

- *տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտների հայտնաբերումն և վերացումը:*

Կշարունակվի ապրանքային շուկաների հետազոտության միջոցով **գերիշխող դիրք** ունեցող տնտեսավարող սուբյեկտների բացահայտումը:

Գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման կանխարգելման, նախազգուշացման և սահմանափակման համար նախատեսվող միջոցառումներն են՝

- *գերիշխող ճանաչված տնտեսավարող սուբյեկտների գործունեության հետազոտում,*

- *չարաշահումների բացահայտում և վերացում,*

- *շուկա մուտք գործելու խոչընդոտների վերացմանն ուղղված քաղաքականության իրականացում:*

Քայլեր կձեռնարկվեն **համակենտրոնացումների**, որոնք հիմնականում արտահայտվում են տնտեսավարող սուբյեկտների միաձուլմամբ, մեկ սուբյեկտի կողմից այլ տնտեսավարող սուբյեկտների միջոցների կամ փայաբաժնի ձեռք բերմամբ, բացահայտման և կարգավորման համար:

Հանձնաժողովը կիրականացնի հետևյալ միջոցառումները.

-մասնակիցների ձեռնարկատիրական գործունեության համակարգման նպատակով տնտեսավարող սուբյեկտների միավորման արդյունքում ստեղծվող կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության իրականացում,

-տարբեր ապրանքային շուկաներում համակենտրոնացումների բացահայտում, շուկայի վրա դրանց ազդեցության հետազոտում,

-գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացումների հայտնաբերում ու լուծարում:

Անբարեխիղճ մրցակցության բացահայտման ուղղությամբ Հանձնաժողովը լիազորված և շահագրգիռ այլ մարմինների հետ համատեղ վերահսկելու է ապրանքային նշանների կեղծման, նմանակման, ֆիրմային անվանումների ապօրինի օգտագործման և ազնվության, բարեխղճության, արդարության սկզբունքների խախտումների դրսևորումները:

Հավասար մրցակցային պայմաններ ստեղծելու նպատակով Հանձնաժողովն իրականացնելու է մենաշնորհի և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ հսկողություն, հակամրցակցային համաձայնությունների բացահայտումն և կանխարգելումը, տնտեսական մրցակցության էապես խոչընդոտող, այդ թվում՝ մենաշնորհային և գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացման պետական կարգավորումը՝ միաժամանակ անպատիժ չթողնելով ոչ մի հակաօրենսդրական գործողություն:

Նախատեսվող **ինստիտուցիոնալ բարեփոխումները** երաշխավորելու են տնտեսության մեջ երկարաժամկետ և լայնածավալ ներդրումների ներգրավումը: Հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա, ընդլայնվելու են հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի իրավասություններն ու գործիքակազմը, ներդրվելու են մրցակցության պաշտպանության և բարելավմանն ուղղված ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ, կապահովվի իրականացվող աշխատանքների թափանցիկությունը և հրապարակայնությունը:

Հանձնաժողովը համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, արտադրական ենթակառուցվածքների, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների հետ 2013 թվականից սկսած աշխատանքներ կիրականացնի **առաջին անհրաժեշտության (ռազմավարական) պարենային և ոչ պարենային ապրանքների ցանկի սահմանման** ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա այդ ապրանքային շուկաների համար ներդնել

չհիմնավորված գների կիրառումը բացառող մեխանիզմներ: Առաջին անհրաժեշտության (ռազմավարական) պարենային և ոչ պարենային ապրանքների ցանկի հաստատմանը զուգահեռ մշակվելու են այդ ապրանքային շուկաներում իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված **գների կարգավորման ուղղությունները**, ինչն էլ կազդի այդ ապրանքների գնագոյացման ընթացքին (շղթային) և գնաճի զսպմանը:

Մրցակցային դաշտի ձևավորման տեսանկյունից խիստ կարևոր է պետական օժանդակության արդարացի տրամադրումը, քանի որ մի տնտեսավարողին ֆինանսապես աջակցելու դեպքում հնարավոր է, որ անհավասար պայմաններ ստեղծվեն նույն գործունեությամբ զբաղվող այլ սուբյեկտների համար: Պետական օժանդակության (օգնություններ, վարկեր, գրանտներ) տրամադրման **գործընթացի թափանցիկության ապահովման համար** աշխատանքներ կտարվեն Հանձնաժողովի կողմից տնտեսավարող սուբյեկտների մասին տեղեկանքների տրամադրման գործընթացի կամավորության սկզբունքը պարտադիր դարձնելու ուղղությամբ:

Նշված գործողությունների իրականացման համար Հանձնաժողովը ծրագրում է հետևյալ միջոցառումները.

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

	Միջոցառում	Ժամկետ
1.	Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրական դրույթների վերանայում Օրենքի դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան նորմատիվային բազայի կատարելագործում Աշխատակազմի և շահագրգիռ խմբերի շրջանում սեմինարների, քննարկումների և հանդիպումների կազմակերպում Հսկիչ գնումների արդյունքում ձեռքբերված ապրանքների տնօրինման կարգը հաստատելու մասին որոշում Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը հաստատելու մասին որոշում	Եռամսյակի ընթացքում
2.	Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաների վերլուծությանն ուղղված աշխատանքներ	
	Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ մասնավորապես կենտրոնացվածության աստիճանի որոշում, բնակչության կողմից սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ապրանքային շուկաներում	տարվա ընթացքում
	Նախկինում ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում	կիսամյակային
3.	Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման նպատակով ուսումնասիրություն, գնահատում, օրենքի խախտման դեպքում՝ պատասխանատվության միջոցների կիրառում	տարվա ընթացքում, դիմումների հիման վրա, Հանձնաժողովի նախաձեռնությամբ

	Իրացման և ձեռքբերման խտրական գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում, գնահատում և վերլուծություն	
	Ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում	
4.	Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում՝ հնարավոր չարաշահումների հայտնաբերման, կանխման ու վերացման նպատակով	տարվա ընթացքում, դիմումների հիման վրա, Հանձնաժողովի նախաձեռնությամբ
	Գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից այլ գործողությունների բացահայտում, որոնք հանգեցնում են այլ տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտների կամ շուկայից նրանց դուրս մղելուն:	
5.	Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում	տարվա ընթացքում, դիմումների հիման վրա, Հանձնաժողովի նախաձեռնությամբ
	Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման նպատակով գովազդի ոլորտում մշտական դիտանցում	
	Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումների, ՁԼՄ-երի հրապարակումների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում	
	Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքների, հսկիչ գնումների իրականացում	
6.	Տնտեսական մրցակցության սահմանափակման, կանխման կամ օրենքին հակասող պետական օժանդակության դեպքերի նկատմամբ վերահսկողություն	տարվա ընթացքում, դիմումների հիման վրա, Հանձնաժողովի նախաձեռնությամբ
7.	Քարոզչություն և հասարակության տեղեկացվածության բարձրացում	
	Ձանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում	տարվա ընթացքում
	Ինտերնետային ցանցում Հանձնաժողովի կատարած աշխատանքների տեղադրում	
8.	Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն	տարվա ընթացքում

* Նշված յուրաքանչյուր միջոցառում ներառում է պարտադիր կատարման համալիր գործողություններ:

Լիցենզավորում, ներդրումային ծրագրերի որակական ցուցանիշների ուսումնասիրություն և սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում կշարունակի **լիցենզավորման** գործընթացն և կիրականացնի լիցենզավորման պայմանների կատարման և դրանց խստացման ուսումնասիրություններ: Առանձնապես ուշադրություն կդարձվի սպառողների և լիցենզավորված գործունեություն վարող մարմինների միջև պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքին, իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարող ընկերությունների նկատմամբ կկիրառվեն պատասխանատվության միջոցներ:

Սակագնային քաղաքականության իրականացման բնագավառում Հանձնաժողովը հիմք կընդունի համաշխարհային պրակտիկայում ընդունված՝ անհրաժեշտ հասույթի, ողջամիտ շահույթի և ծախսերի հիմնավորվածության ապահովման սկզբունքները, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռումը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Ելնելով սղաճի և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի՝ համաձայն Հանձնաժողովի կողմից ընդունված մեթոդիկայի, վերանայվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Իրականացվելու է գործող սակագնի կառուցվածքի համապատասխան ուսունասիրություն, լրամշակվելու է էներգետիկայի բնագավառում սակագնային մարժայի հաշվարկման մեթոդաբանությունը, մշակվելու է նաև ջրային համակարգում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման մեթոդաբանությունը: Աշխատանքներ կծավալվեն այլընտրանքային էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման ուղղությամբ:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերվող հիմնավորված որոշումների ընդունման, սակագնի սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

Այդ առումով լրամշակվելու են նաև ընկերությունների կողմից Հանձնաժողով ներկայացվող ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների ձևերը:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով, նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա ավարտը ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունները:

2013 թվականին նախատեսվում է տրամադրել Հանձնաժողովի կողմից կարգավորվող բնագավառներում լիցենզիաներ և թույլտվություններ հետևյալ ընկերություններին.

Հ/Հ	Իրավաբանական անձ	Լիցենզիաների և թույլտվությունների գործունեության տեսակը	Ծանուցում
	Էներգետիկա		
1	«Էյ-ի-Ջի» ՍՊԸ	Էլ. էներգիայի (հզորության) արտահանման	երկարաձգում
2	«Էյ-ի-Ջի» ՍՊԸ	Բնական գազի ներկրման	երկարաձգում
3	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ		
3.1	«Թրդի -3»	կառուցման	փոքր ՀԷԿ
4	«Ալֆամագ» ՓԲԸ «Սյունիք -3»	արտադրության	փոքր ՀԷԿ
5	«Սյունիք -4»	կառուցման	փոքր ՀԷԿ
	Ջրային համակարգ		
6	«Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ	ջրային համակարգի օգտագործման	նոր շրջանների ներառում
7	«Քաշաթաղի ջրամատակարարում» ՓԲԸ	ջրային համակարգի օգտագործման	խմելու և ոռոգման ջրի

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին՝ ինչպես ընկերություններից պահանջվող հաշվետվությունների, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող մոնիթորինգների միջոցով:

Կարգավորման կարևոր լծակներից է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցումը հանձնաժողովի հետ, ինչը հնարավորություն է տալիս վերահսկել ներդրումների արդյունավետությունը՝ դրանք նպատակաուղղելով բնագավառներում նորարարական, ավելի էներգախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և մաշված սարքավորումների փոխարինմանը կամ ենթակառուցվածքների վերակառուցմանը:

Ջանքեր են գործադրվում սպառողների հոսանքագրկումների քանակի և տևողության, թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ցուցանիշների հավաստիության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Դրանց մակարդակի ճշգրտումը հնարավորություն կտա առավել հասցեական և արդյունավետ իրականացնելու ներդրումները:

Շարունակական բնույթ են կրելու խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն ցուցանիշները բարելավելու ուղղությամբ տարվող ներդրումային աշխատանքները՝ հատկապես Ստեփանակերտ քաղաքի ջրամատակարարմանն ուղղված գործառնությունները:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից տարվող հստակ քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն առաջընթացի մասին:

2013 թվականի վերջում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կունենանք 7 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնց գումարային հզորությունը կկազմի 24.233 ՄՎտ, որոնք տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 134.1 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա և միաժամանակ կկառուցվեն ևս 2 փոքր հիդրոէլեկտրակայաններ («Սյունիք-4», «Թրդի-3»), որոնց գումարային հզորությունը կկազմի 6.9 ՄՎտ, ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն ավելի քան 33.3 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա: Բարենպաստ պայմաններ ստեղծելով և խթանելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը, միաժամանակ հետևում ենք դրանց կառուցման ընթացքին՝ վերահսկելով լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

Հասարակության հետ տարվող աշխատանքների բարելավում

Հանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին հաղորդագրությունները, Հանձնաժողովի գործունեությանն առնչվող պաշտոնական տեղեկատվությունը կիրապարակվեն մամուլում, կտարածվեն էլեկտրոնային լրատվամիջոցներով և փոստով: Կշարունակվի Հանձնաժողովի արդյունավետ փոխգործակցությունը ԶԼՄ-ների հետ: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հասարակական հնչեղություն ունեցող որոշումների, հարցերի շուրջ էլեկտրոնային լրատվամիջոցներով և տպագիր մամուլով պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Կիրականացվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծություն: Լրատվամիջոցների հաղորդած տեղեկությունները, ընկերություններից համապատասխան պարզաբանումներ ստանալուց հետո, կօգտագործվեն մատուցվող ծառայությունների որակի մասին Հանձնաժողովի նպատակային ուսումնասիրություններում:

Հանձնաժողովը ջանքեր կգործադրի թափանցիկ և հրապարակային գործունեության, զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցության ճանապարհով նպաստելու հանրության իրազեկության աստիճանի բարձրացմանը, յուրաքանչյուր քաղաքացու տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացմանը: Հանձնաժողովը պաշտոնական ինտերնետային կայքով, թերթերով, հեռուստատեսությամբ կծանուցի Հանձնաժողովի նիստերի մասին, իսկ դրանց ավարտից հետո կմեկնաբանվեն ընդունված որոշումները, լրագրողների համար կկազմակերպվեն ձեպագրույցներ: Կշարունակվեն նաև պարբերաբար քննարկումները, մոնիթորինգների անցկացումը հասարակական կազմակերպությունների, սպառողների և կարգավորվող ընկերությունների մասնակցությամբ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, սպառողներին հուզող հարցերին և բողոքներին պատշաճ ընթացք տալու նպատակով:

Ներպետական և միջազգային համագործակցություն

Հանձնաժողովը առաջատար երկրների փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով կշարունակի ակտիվ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության համապատասխան Հանձնաժողովների և նրանց միջոցով նաև միջազգային կառույցների հետ: Հայաստանի Հանրապետության համապատասխան Հանձնաժողովների հետ կկնքվեն համագործակցության համաձայնագրեր, որոնց շրջանակներում 2013 թվականին Հանձնաժողովի մասնագետները կմասնակցեն միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող սեմինարներին և տարաբնույթ միջոցառումներին:

Հանրային ծառայությունների հիմնախնդիրների լուծմանը և մրցակցության պաշտպանության զարգացմանը նպաստելու առումով համագործակցությունը իրականացվելու է նաև հետևյալ ուղղություններով.

- Համագործակցություն ինստիտուցիոնալ նպատակով,
- Համագործակցություն տնտեսական մրցակցության մասին օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նկատառումով՝ ներառելով ժամանակակից մարտահրավերների հրամայականները,
- Ստորագրված համագործակցության համաձայնագրերով սահմանված պարտավորությունների կատարման արդյունավետության բարձրացում,
- Փորձի փոխանակում և լավագույն փորձի կիրառում:

Հանձնաժողովը նախատեսում է ընդլայնել և զարգացնել նաև ներպետական համագործակցությունը՝ սերտորեն համագործակցել պետական կառավարման մարմինների և այլ գերատեսչությունների հետ: Դա պայմանավորված է հավաստի տեղեկատվության ստացման, փորձի փոխանակման և տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման վերաբերյալ հասարակության և պետական այլ մարմինների կողմից ընկալման անհրաժեշտությամբ: Այդ տեսանկյունից կարևորվում է Հանձնաժողովի համագործակցությունը օրենսդիր, գործադիր և դատական համակարգի կառույցների հետ: Միաժամանակ բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու և մրցակցության քաղաքականության կիրարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հանձնաժողովը կհամագործակցի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրության ծառայության, արդարադատության նախարարության, արտադրական ենթակառուցվածքների նախարարության, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության, ինչպես նաև պետական շահագրգիռ այլ մարմինների հետ:

Այս ծրագրում նշված նպատակներին հասնելու համար Հանձնաժողովն ակնկալում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների ու գործարար հանրության, սպառողների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը:

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական
մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի նախագահ**

Հ. Շ. Ղահրամանյան

Տեղեկանք
Կարգավորվող բնագավառների իրավիճակների մասին
Էներգետիկայի բնագավառ

Այս բնագավառն ընդգրկում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգերը:

Ոլորտի կարգավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով և «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով Հանձնաժողովին վերապահված իրավասությունների ու գործառնությունների շրջանակում:

2012 թվականին կատարվել են զգալի աշխատանքներ այս բնագավառի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ 2012 թվականի ընթացքում ընդունվել է 21 որոշում, որից 2-ը նորմատիվ, 19-ը՝ անհատական:

Այս բնագավառում գործող կարգավորվող ընկերությունները պետական բյուջե են վճարում տարեկան **պետական տուրք**՝ օրենսդրությամբ սահմանված չափով, ինչպես նաև հանրային ծառայությունների **կարգավորման պարտադիր վճար**՝ Հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր տարվա համար սահմանվող չափով: Կարգավորման պարտադիր վճարները վերաբերում են այն կարգավորվողներին, որոնց կողմից մատուցվող ծառայությունների սակագները Հանձնաժողովի կողմից ենթակա են կարգավորման:

էներգետիկայի բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ 2011 թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան ֆինանսական հաշվետվությունների և 2011 թվականի 4-րդ և 2012 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների տեխնիկատնտեսական տեղեկատվությունների և 1-ին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունների ամփոփում և բազայի համալրում:

- Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից 2011 թվականի 4-րդ եռամսյակի և 2012 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների ներկայացված տեղեկատվությունների ամփոփում և բազայի համալրում:

- Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի ուսումնասիրություն:

- Լիցենզավորված անձանց լիցենզիաների պայմանների վերահսկում:

Ջրային համակարգում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց կողմից 2011 թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան ֆինանսական հաշվետվությունների և 2011 թվականի 4-րդ և 2012 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների տեխնիկատնտեսական տեղեկատվությունների և 1-ին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունների ամփոփում և բազայի համալրում:

- Խմելու ջուր մատակարարող ընկերությունների ծառայությունների մատուցման որակի ցուցանիշների գրանցամատյանների և տեղեկատվական ձևերի ներդրումը ընկերություններում:

- Կարգավորվող բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց թույլտվությունների ժամկետների երկարաձգման և ծառայությունների մատուցման սակագների սահմանման վերաբերյալ հայտերի ուսումնասիրությունը ընթացքի մեջ է:

- Լիցենզավորված անձանց ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմանների վերահսկում:

2012 թվականի մայիս ամսվա ընթացքում կարգավորվող ընկերություններում իրականացվել է քաղաքացիներից ստացված դիմում-բողոքների գրանցամատյանների վարման կարգի ուսումնասիրություն:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում մշտապես գտնվել է լիցենզավորված անձանց լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը: Լիցենզիայի պայմանների կատարման վերահսկման, հաշվետվությունների և տեղեկատվությունների հավաստիացման ճշգրտման նպատակով կազմակերպվել և պահանջվել է լիցենզավորված անձանց գործունեությունը հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթեր և իրականացվել են քննարկումներ:

Կազմակերպվել են քննարկումներ լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ:

Փոստային կապի բնագավառ

«Փոստային կապի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18¹-րդ հոդվածի համաձայն՝ փոստային կապի բնագավառը Հանձնաժողովի կարգավորման ներքո է միայն ԼՂՀ-ում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասով: Սակայն Հանձնաժողովի կողմից սակագներ դեռևս չեն սահմանվել կամ վերանայվել, համապատասխան հայտ նույնպես չի ներկայացվել:

Բնագավառի կարգավորվող ընկերությունն է՝

«Արցախփոստ» ՓԲ Ընկերությունը.

Լիցենզավորվել է մինչև Հանձնաժողովի ստեղծումը՝ 2005 թվականի դեկտեմբերի 9-ին, ԼՂՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարության կողմից՝ ստանալով փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրությունների, մատուցման անժամկետ լիցենզիա (N003):

Ընկերության կողմից ներկայացվում են կարգավորվող գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններ՝ համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի: Կատարվում է վերլուծություն:

2012 թվականի ընթացքում Ընկերության կողմից պետական բյուջե է վճարվել կարգավորման 103,7 հազ. դրամ պարտադիր վճար:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ

Այս բնագավառի կարգավորումը միայն սակագների սահմանման և վերանայման մասով է ըստ «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման ու վերանայման մասին» ԼՂՀ օրենքի:

Բնագավառի կարգավորվող ընկերությունն է՝

«Տեխնոսերվիս» ՍՊ Ընկերությունը.

Ընկերությունը լիցենզավորվել է 2010 թվականի հունվարի 20-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության կողմից՝ ստանալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության անժամկետ լիցենզիա:

Ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններ: Կատարվում է վերլուծություն:

2012 թվականի ընթացքում Ընկերության կողմից պետական բյուջե է վճարվել կարգավորման 376,4 հազ. դրամ պարտադիր վճար:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ

Սույն բնագավառում ծագող իրավահարաբերությունները Հանձնաժողովը կարգավորում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» և «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և իր ընդունած իրավական ակտերով:

2012 թվականի ընթացքում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում իրականացվել են մի շարք աշխատանքներ ուղղված առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների մոնիթորինգների, գերիշխող դիրքի, անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտմանը, իրավական ակտերի մշակմանն ու ընդունմանը, մենաշնորհի և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվությունների վերլուծությանը:

Հանձնաժողովի կողմից 2012 թվականին ընդունվել են տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառին առնչվող 17 որոշում, որոնցից 7-ը՝ նորմատիվ, 10-ը՝ անհատական:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն 7 մենաշնորհ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտները 8 ապրանքային շուկաներում և 19 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտները 27 ապրանքային շուկաներում ներկայացրել են 2011 թվականի 2-րդ կիսամյակի տեղեկատվությունները: Ներկայացված տեղեկատվությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահում չի հայտնաբերվել, 7 մենաշնորհ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտները պահպանել են

իրենց մենաշնորհ դիրքը, իսկ 19 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներից 4-ի մասնաբաժինների էական փոփոխության պատճառով անհրաժեշտություն է առաջացել «Ավտոմեքենաների ձեռքբերման վարկերի տրամադրում», «Ղեղերի շրջանառության ոլորտ», «Նրբերշիկ» և «Կարագ» ապրանքային շուկաներում կատարել նոր ուսումնասիրություններ: Ուսումնասիրություններն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով կատարվել են մի շարք աշխատանքներ ուղղված իրավական ակտերի փոփոխմանը:

Հանձնաժողովը իր գործունեությունը կենտրոնացրել է սոցիալական նշանակության ապրանքային շուկաների ուսումնասիրության վրա՝ հիմքում դնելով գերիշխող դիրքի բացահայտմանն ուղղված աշխատանքները: Այս կապակցությամբ 2012 թվականի օգոստոսի 17-ի N 68 Ա որոշմամբ ընդունվեց ««Ղեղերի շրջանառության ոլորտ», «Նրբերշիկ», «Պանիր», «Մարգարին», «Ցորենի ալյուր» ապրանքային շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից տեղեկատվություն ներկայացնելու մասին» որոշումը: 2012 թվականի հոկտեմբերի 25-ի «Ցորենի ալյուր» և «Նրբերշիկ» ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքում N 94Ա և N 95Ա որոշումներով գերիշխող դիրք ունեցող համարվեցին թվով 6 տնտեսավարող սուբյեկտ: Մյուս շուկաների ուսումնասիրությունները ընթացքի մեջ են:

Հանձնաժողովը շարունակել է աշխատանքներ իրականացնել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և կանխման ուղղությամբ: Այսպես Հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել «Մեքենավար» և «ՄԳԱ Վոթըր-Ա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների նկատմամբ, որոնց տրվել են նախազգուշացումներ և պարտավորվել են վերացնել խախտումները:

2012 թվականի հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով 43 դիտանցում, որոնց արդյունքում պարզվել է, որ 17 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող խանութների դիմային մասերում հայտնաբերվեց ոչ ճիշտ զեղչերի արտապատկերում: Արտապատկերված զեղչերը վերաբերում էին ոչ բոլոր ապրանքատեսակներին, սակայն դրանց մասին գրառումը առկա չէր:

Իրականացված դիտանցումների արդյունքում բացահայտվեց ու արձանագրվեց նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող և իրացվող երշիկեղեն, որոնց վրա բացակայում են արտադրության, պիտանելիության ժամկետները և օրենքով նախատեսված այլ տվյալներ:

Նշված տնտեսավարող սուբյեկտներին ծանուցվեց օրենքի խախտումների վերաբերյալ, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտները վերացրեցին իրենց կողմից թույլ տրված խախտումները:

Առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների և անբարեխիղճ մրցակցության հնարավոր դեպքերի բացահայտման նպատակով դիտանցումներ են իրականացրել նաև Ասկերան, Մարտունի, Մարտակերտ, Հաղուօթ և Շուշի քաղաքներում, ինչպես նաև կատարել դրանց արդյունքների վերլուծություն:

Հաշվի առնելով հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի մանրածախ առևտրի ոլորտում տարվող քաղաքականությունը՝ 2012 թվականի հուլիսի 2-ից կատարվել են փոփոխություններ առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների շաբաթական դիտանցման ցանկերում ընդգրկել գերիշխող դիրք ունեցող (եթե հանդիսանում է երեք կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ) առևտրային ցանցերը և համեմատաբար խոշոր առևտրային օբյեկտները, ինչպես նաև մեկական մասնաբերքի և բանջարեղենի խանութներ:

Արդյունքում ընտրվել են 26 առևտրային ցանց հանդիսացող խանութներ և 34 առավել խոշոր խանութներ, որոնք ունեն մեծ տեսականի և մեծ քանակությամբ հաճախորդներ:

2012 թվականին Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների 44 դիտանցում՝ 60 առևտրային օբյեկտներում և կատարվել են դրանց արդյունքների վերլուծություն:

Մոնիթորինգների արդյունքում էական փոփոխություններ են արձանագրվել մի շարք ապրանքային շուկաներում, մասնավորապես՝ գների իջեցում է արձանագրվել «Հնդկաձավար», «Ոսպ», «Պանիր», «Շաքարավազ» ապրանքային շուկաներում, գների բարձրացում է արձանագրվել «Բենզին», «Դիզելային վառելիք», «Մսամթերք», «Յուղ», «Թեյ», «Ձեթ», «Ձու», «Ալյուր» ապրանքային շուկաներում:

Զիմնավորված գների կիրառումը բացահայտելու նպատակով Հանձնաժողովը 2012 թվականին ուսումնասիրություններ է իրականացրել «Հավի ձու», «Մսամթերք», «Հանքային ջուր», «Հաց», «Ցորենի ալյուր», «Բնական գազ» ապրանքային շուկաներում: Ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովին հաջողվել է բացառել չհիմնավորված գների կիրառումը, իսկ որոշ դեպքերում էլ գները իջեցվել են:

«Հաց» և «Ցորենի ալյուր» ապրանքային շուկաներում գների կարգավորման նպատակով Հանձնաժողովի միջնորդությամբ տեղի է ունեցել ընդլայնված խորհրդակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի, կառավարության անդամների, ցորենի ալյուր և հաց արտադրող ընկերությունների մասնակցությամբ: Քննարկումների ընթացքում հաշվի է առվել պարենային ցորենի արտադրությամբ զբաղվող գյուղացիների ակնկալվող եկամուտները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից «ցորենի ալյուր» և «հաց» ապրանքային շուկաներում գործող խոշոր տնտեսավարող սուբյեկտների մոտ

կատարած ուսումնասիրությունների արդյունքում ձեռքբերված տվյալները: Արդյունքում 1 կգ պարենային ցորենի ձեռքբերման նվազագույն գինը սահմանվեց 150 դրամ, 1 կգ բարձր կարգի այլուրի առավելագույն գինը՝ 234 դրամ (1 պարկը՝ 11700 դրամ), իսկ 1 հացի (320-340գր) իրացման գինը մնաց անփոփոխ՝ կազմելով 110 դրամ:

2012 թվականին շարունակվել է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի միջև, որի շրջանակներում տեղի են ունեցել բազմաթիվ սեմինարներ Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում, շաբաթական մոնիթորինգների արդյունքների և այլ տվյալների փոխանակում: Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից «Կարագ» և «Սփրեդ» ապրանքային շուկաների ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ տվյալ ապրանքատեսակների իրացմամբ Հայաստանի Հանրապետությունում ընդգրկված են նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված տնտեսավարող սուբյեկտներ: Այս կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանձնաժողովի կողմից հավաքագրվել են տեղեկատվություններ և տրամադրվել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին:

Հանձնաժողովը նախաձեռնել է հսկիչ գնման անցկացման և հսկիչ գնման արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման վերաբերյալ ակտերի մշակումը: Այդ նպատակով Հանձնաժողովը հանդես է եկել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու նախաձեռնությամբ:

Հեռահաղորդակցության բնագավառ

Այս ոլորտն իր մեջ ներառում է հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը: Այն իր բազմաբնույթ խնդիրներով շարունակում է Հանձնաժողովի գործունեության մեջ մնալ որպես գերակա ուղղություն:

Ոլորտի կարգավորումն իրականացվում է «էլեկտրոնային հաղորդակցության մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով՝ Հանձնաժողովին վերապահված գործառնություններն իրականացնելու համար:

2012 թվականի ընթացքում **էլեկտրոնային հաղորդակցության, այդ թվում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում** կատարվել են հետևյալ աշխատանքները.

Ընդունվել են թվով 61 որոշում, որից 12-ը՝ նորմատիվ, 48-ը՝ անհատական, 1-ը՝ լոկալ:

2012 թվականի ընթացքում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման թվով 21, ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման թվով 2 լիցենզիաներ և ռադիոհաձախականությունների օգտագործման թվով 2 թույլտվություն՝ շարժական ռադիոկապի և ռադիոռելեային կապի գծերի շահագործման համար: Փոփոխություն է կատարվել 2 լիցենզիայում և մեկ ռադիոհաձախականության օգտագործման թույլտվության պայմաններում՝ գործունեության վայրը այլ վայր տեղափոխելու նպատակով: Դադարեցվել է Ստեփանակերտ քաղաքի տարածքում ռադիոհաղորդումների կաբելային վերահեռարձակման 1 լիցենզիայի, ռադիոհաձախականությունների օգտագործման 1 թույլտվության և տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 14 լիցենզիաների գործողությունը: Հանձնաժողովի որոշմամբ դադարեցվել է՝ առանց ռադիոհաձախականությունների օգտագործման թույլտվության, 1 ռադիոհաձախականության օգտագործումը:

2012 թվականի նոյեմբերի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ռադիոհաձախականությունների օգտագործման համար տրամադրված թույլտվություններ ունեին 21 տնտեսավարող սուբյեկտ, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման լիցենզիա՝ 57 տնտեսավարող սուբյեկտ և ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզիա՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Հանձնաժողովի մի շարք որոշումներով հաստատված ձևերով կարգավորվող ընկերությունների կողմից Հանձնաժողով են ներկայացվում եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ՝ ֆինանսական և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ, որոնց հիման վրա կատարվում են համապատասխան վերլուծություններ:

էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորվողներից առանձնակի հարկ է մշել «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲ Ընկերությանը, քանի որ այն զբաղեցնում է մենաշնորհ դիրք՝ «Անրակցված հեռախոսակապի ծառայություններ» և «Բջջային կապի ծառայություններ» ապրանքային շուկաներում, ու գերիշխող դիրք՝ «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ» ապրանքային շուկայում:

Հանձնաժողովի հետ քննարկումների արդյունքում 2012 թվականին վերանայվել էր թվային անշարժ և ֆիքսված անլար միջերես (WLL) հեռախոսակապի սակագները և սահմանել նոր սակագներ ի նպաստ բաժանորդների:

Այսպիսով փետրվար ամսին նվազել են թվային անշարժ հեռախոսակապի մի շարք սակագներ.

- Անջատված համարի վերամիացման վարձը նվազել է 60%-ով՝ քաղաքացիների համար, 44%-ով՝ բյուջետային հիմնարկների համար և 72.2%-ով՝ այլ բաժանորդների համար,
- Նույն բնակարանում հեռախոսային սարքերի վերատեղադրման վարձը նվազել է 50%-ով՝ քաղաքացիների համար, 33,3%-ով՝ բյուջետային հիմնարկների և այլ բաժանորդների համար,
- Նույն շենքում հեռախոսային սարքերի վերատեղադրման վարձը նվազել է 62,9%-ով՝ քաղաքացիների համար, 46,6%-ով՝ բյուջետային հիմնարկների և այլ բաժանորդների համար,
- Շենքից դուրս հեռախոսային սարքերի վերատեղադրման վարձը նվազել է 80%-ով՝ քաղաքացիների համար, 20%-ով՝ բյուջետային հիմնարկների և այլ բաժանորդների համար,
- Լրացուցիչ վարդակի տեղադրման վարձը նվազել է 50%-ով՝ քաղաքացիների համար, 33,3%-ով՝ բյուջետային հիմնարկների և այլ բաժանորդների համար,
- Դեպի թվային անշարժ հեռախոսահամարներ կատարվող ներշրջանային զանգերի սակագները նվազել են 16,6%-ով բոլոր բաժանորդների համար,
- Թվային ցանցում կատարված զանգերի և ինտերնետ տրաֆիկի վերձանման ծառայությունը Հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է որպես անվճար ծառայություն:

Ապրիլ ամսին նվազել են նաև Ֆիքսված անլար միջերես (WLL) հեռախոսակապի մի շարք սակագներ.

- Բաժանորդավճարը նվազել է 50%-ով,
- Հասցեի փոփոխման վարձը նվազել է 66,6%-ով,
- Միացման վճարը նվազել է 25%-ով:

Փետրվար-մարտ ամիսներին սահմանվել են բջջային կապի հետվճարային քարտերի բաժանորդների համար պլատինե, ոսկե, արծաթե և բրոնզե համարների ձեռքբերման ծառայության նոր սակագներ, ինչպես նաև 54,5%-ով նվազել է կանխավճարային քարտերի «Գիշերային» սակագնային պլանի ներսում կիրառվող ընդհանուր վճարը: Ընդ որում, Հանձնաժողովի թույլտվությամբ գեղեցիկ համարի ընտրության ծառայությունը մեկնարկելուց հետո՝ բոլոր տեսակի հեռախոսակապերի համար գեղեցիկ համարի ընտրության ծառայությունը մատուցվում է միանման սակագներով:

Նոյեմբերին բջջային հեռախոսակապի կանխավճարային քարտերի բաժանորդների համար հաստատվել է սակագնային պլան, որի ներսում դեպի երեք ընտրված հեռախոսահամար ներցանցային զանգերը կատարվում են գործող սակագներից 50%-ով նվազեցված սակագներով, իսկ դեպի ՀՀ հեռախոսահամար կատարվող զանգերի սակագները՝ 25%-ով նվազեցված սակագներով:

Հանձնաժողովի որոշմամբ կրկնակի ավելացվեցին ինտերնետ արագությունները, ընդ որում նվազագույն արագության շեմը սահմանվեց մինչև 512 կբիթ/վ: Նշված որոշման ընդունման արդյունքում սահմանվեցին ինտերնետ կապի նոր նվազեցված ամսավճարներ՝ DSL մոդեմով և օպտիկամանրաթելային մալուխով տեխնոլոգիաների համար: Ընդ որում ամսավճարները ներառում են 1 IP հասցե: Ամսավճարները ըստ արագությունների նվազել են.

- մինչև 512 կբիթ/վրկ արագությամբ DSL տեխնոլոգիայի դեպքում՝ 59.5%-ով, օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի դեպքում՝ 54%-ով,
- մինչև 1024 կբիթ/վրկ արագությամբ DSL տեխնոլոգիայի դեպքում՝ 55.3%-ով, օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի դեպքում՝ 53.2%-ով,
- մինչև 2048 կբիթ/վրկ արագությամբ DSL տեխնոլոգիայի դեպքում՝ 54.8%-ով, օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի դեպքում՝ 53.2%-ով,
- մինչև 3072 կբիթ/վրկ արագությամբ DSL տեխնոլոգիայի դեպքում՝ 50.6%-ով, օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի դեպքում՝ 49.3%-ով,
- մինչև 6144 կբիթ/վրկ արագությամբ DSL տեխնոլոգիայի դեպքում՝ 34.8%-ով, օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի դեպքում՝ 33.9%-ով:

Ընդլայնելով մատուցվող ծառայությունների ցանկը՝ սահմանվեցին նաև մինչ այդ չմատուցվող մինչև 10 Մբիթ/վրկ, 20 Մբիթ/վրկ և 30 Մբիթ/վրկ արագությունների ամսավճարներ:

Բացի նշված միջոցառումներից՝ Հանձնաժողովի կողմից տրված համաձայնության հիման վրա 2012 թվականին ընկերության կողմից հայտարարվել են մի շարք հրապարակային օֆերտաներ:

Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման բնագավառում Հանձնաժողովի և «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության միջև տեղի ունեցած քննարկումների արդյունքում, հունվար ամսում, Հանձնաժողովի որոշմամբ սահմանվել են

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցներին մատուցվող տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների սակագները, որոնք ցածր են գործող սակագներից 90%-ով, իսկ ապրիլ ամսին ընդունվեց ևս մեկ որոշում, որով սահմանվեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններին մատուցվող տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագները: Նշված սակագները 30%-ով ցածր են գործող սակագներից:

Մարտ ամսին սահմանվել են նաև նոր «Գիշերային արագություն» հավելյալ ծառայության սակագները, որի շնորհիվ ինտերնետ ծառայության բաժանորդները հնարավորություն ստացան գիշերային ժամերին կրկնապատկել ինտերնետ կապի արագությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք մուտք գործող միջազգային IP տարանցման հոսքերի ընդհանուր թողունակությունը 2012 թվականի նոյեմբերի դրությամբ կազմում է 750 Մբիթ/վ., որը 2012 թվականի հունվարի 1-ի համեմատությամբ աճել է մոտ 1,5 անգամ:

Նշված միջոցառումների հետ զուգահեռ 2012 թվականի ընթացքում Հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է ռադիոհաձախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման նոր պարզեցված կարգը և ռադիոհաձախականության օգտագործման համար վճարման ենթակա պարտադիր վճարների և դրանց չափի մասին ձևը, որը իրականացվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և «Պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում կատարված լրացումների շնորհիվ: Դրանով իսկ ռադիոհաձախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման և ռադիոհաձախականությունների օգտագործման վճարների սահմանման և հավաքագրման գործընթացը գերատեսչական ակտերի կարգավորման շրջանակից տեղափոխվել է օրենսդրական ակտերի կարգավորման շրջանակ:

Տրամադրված ռադիոհաձախականության օգտագործման թույլտվությունների հիման վրա կատարվել է 2012 թվականի ռադիոհաձախականությունների օգտագործման տարեկան պարտադիր վճարների հաշվարկ, որի հիման վրա յուրաքանչյուր եռամսյակ տնտեսավարողներին ներկայացվում են համապատասխան հաշվարկային փաստաթղթերը:

2012 թվականի հուլիսին ընդունվեց հեռախոսային ծառայությունների մատուցման և այդ ծառայություններից օգտվելու կանոնները հաստատելու մասին որոշումը: Նշված կանոններով սահմանվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համարագրման պլանի համարների կամ կողերի օգտագործմամբ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցերով հեռախոսային ծառայությունների մատուցման, այդ ծառայություններից օգտվելու կարգը և կանոնակարգվել են ծառայություններ մատուցողի ու այդ ծառայություններից օգտվողի փոխհարաբերությունները:

Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում 2012 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները`

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում կատարված լրացման շնորհիվ` հնարավոր դարձավ 2012 թվականի հունվար ամսում հաստատել հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանի վարման կարգը, որի միջոցով հնարավոր դարձավ ստուգել հեռուստառադիոընկերությունների գործունեության համապատասխանությունը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջներին: Համաձայն ընդունված կարգի` հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակված յուրաքանչյուր հաղորդում գրանցվում է հաշվառման մատյանում` նշելով հաղորդման անվանումը, հեռարձակման ամիսը, ամսաթիվը, հաղորդման սկզբի և ավարտի ժամը, համառոտ բովանդակությունը, հեռուստառադիոհաղորդման հեղինակի(ների) և հեռարձակողի անունը, ազգանունը և յուրաքանչյուր ամիս ներկայացվում է Հանձնաժողով: Ներկայացված տվյալները ամփոփվում և համադրվում են պարբերաբար անցկացվող ռադիոհեռարձակման մոնիթորինգների արդյունքների հետ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան` հայտարարվել է մի շարք հաձախականություններով` Ստեփանակերտ քաղաքի և մեկ կամ մի քանի շրջանների տարածքում, ինչպես նաև Ստեփանակերտ քաղաքը չնեռառող` մեկից ավելի շրջանների տարածքում, ընդհանուր ուղղվածության ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման 1 լիցենզավորման մրցույթ: Հայտարարված ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզավորման մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացվել թվով երկու ընկերությունների կողմից, որոնք` համապատասխանելով մրցույթի պայմաններին և օրենսդրության պահանջներին, բավարարվել են: Արդյունքում տրամադրվել է մեկ լիցենզիա Ստեփանակերտ քաղաքի և մեկ կամ մի քանի շրջանների տարածքում, ընդհանուր ուղղվածության եթերային հեռարձակման համար և մեկ լիցենզիա Ստեփանակերտ

քաղաքը չներառող՝ մեկից ավելի շրջանների տարածքում, ընդհանուր ուղղվածության եթերային հեռարձակման համար:

2012 թվականի նոյեմբերի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում են 8 ռադիոընկերություններ, որոնցից 5-ը իրականացնում են ռադիոհաղորդումների եթերային հեռարձակում, 2-ը՝ ռադիոհաղորդումների վերահեռարձակում:

Էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի ոլորտների իրավիճակի ուսումնասիրման արդյունքում բացահայտվել են առանց լիցենզիայի գործունեության և առանց համապատասխան լիցենզիայի գործունեության դեպքեր, որոնք կարող են դիտարկվել որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն, ուստի վերոնշյալ տեղեկությունները ուղարկվել են ըստ իրավասության (պատկանելիության):

Ընդհանրապես հանձնաժողովի կողմից կարգավորվող ոլորտներից 2012 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե է մուտքագրվել **347 164,6** հազ. դրամ:

	Պետական տուրքեր լիցենզիաների համար	Կարգավորման պարտադիր վճարներ	Ռադիոհաձախակա- նությունների թույլտվությունների տրամադրման և օգտագործման պարտադիր վճարներ	Ընդամենը
Էներգետիկայի բնագավառ	22 756,0	48 219,0	-	70 975,0
Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ	1 529,5	29 188,9	243 235,2	273 953,6
Ջրային համակարգ	13,0	1 403,4	-	1 416,4
Փոստային կապ բնագավառ	-	103,7	-	103,7
Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ	-	376,4	-	376,4
Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառ	339,5	-	-	339,5
Ընդամենը	24 638,0	79 291,4	243 235,2	347 164,6

Ներպետական և միջազգային համագործակցություն

Ներպետական և միջազգային համագործակցության շրջանակներում կազմվել են համաձայնագրեր Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական ու հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովների հետ, կնքվել դրանցից բխող աշխատանքային ծրագրեր: Կատարվել են համաձայնագրերով նախատեսված փոխադարձ այցելություններ:

Նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի աշխատակիցների կողմից իրականացվել են թվով 28 գործուղումներ, որից 10-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններ, 13-ը՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովներ, 5-ը՝ արտերկրներ (Սլովենիայի Հանրապետություն, Գերմանիայի Հանրապետություն, Բելգիայի Թագավորություն և 2 անգամ Հունգարիայի Հանրապետություն): Գործուղումների ժամանակ տեղի ունեցած սեմինար քննարկումներին ակտիվ մասնակցելու համար Հանձնաժողովի 5 աշխատակիցներ ստացել են սերտիֆիկատներ, որից համապատասխանաբար՝ 6-ը ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում կայացած սեմինարներին մասնակցելու, 1-ը՝ Հունգարիայի Հանրապետության մայրաքաղաք Բուդապեշտում կայացած «Էներգետիկայի կարգավորման տեսությունը» թեմայով ուսումնական դասընթացներին մասնակցելու համար:

Հասարակության հետ տարվող աշխատանքներ

Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող ընթացիկ տեղեկատվությունները, ամենօրյա թարմությամբ, տեղադրվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի www.kargavorum.nkr.am պաշտոնական վեբ կայքում:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի պաշտոնական վեբ կայքն այցելել է 2374 այցելու, այդ թվում՝ 2296-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից և Հայաստանի Հանրապետությունից, 15-ը՝ Ռուսաստանի Ղաշնությունից, 11-ը՝ Ադրբեջանից, 5-ը՝ ԱՄՆ-ից, 4-ը՝ Մեծ Բրիտանիայից, 5-ը՝ Գերմանիայի Հանրապետությունից, 38 այցելու՝ այլ երկրներից:

Վեբ կայքում 2012 թվականի հունվարի 1-ից հոկտեմբերի 1-ը հայտարարությունների բաժնում տեղադրվել է 17 հայտարարություն: 64 տեղեկատվություն և 17 հայտարարություն տեղադրվել է նորությունների բաժնում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ռադիոհեռուստաընկերությամբ լուսաբանվել և հեռարձակվել է Հանձնաժողովի 11 նիստ, 1 խորհրդակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի և հաց արտադրողների հետ, իսկ «Վեստնիկ» լրատվական թղարկմամբ լուսաբանվել և հեռարձակվել է 4 նիստ: «Հ1» և «Հ2» հեռուստաընկերություններով հեռարձակվել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովների համատեղ նիստերը: «Արմենիա» և «Շանթ» հեռուստաընկերություններով հեռարձակվել է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովների համատեղ նիստերը: Արցախի հանրային հեռուստաընկերությամբ հեռարձակվել է 3 հարցազրույց: 2 անգամ հարցազրույց է տրվել «Ազատ Արցախ» թերթին և 1 անգամ «168 ժամ» թերթին: Հանձնաժողովի 4 նիստ լուսաբանվել է «Երկիր» էլեկտրոնային թերթով: 3 անգամ հարցազրույց է տրվել «Ազատություն» ռադիոկայանին:

Ընդամենը հրապարակային լսումներ են տեղի ունեցել 131 անգամ:

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական
մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի աշխատակազմի ղեկավար**

Ա. Գասպարյան